ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 14/23214 «28» 09 2021թ.

«Էներգացանցշին» ԲԲԸ-ի տնօրեն
պարոն Կ.Միքայելյանին
(ք.Երևան, Բաբայան փ. 10/1)
(mllenergy@yandex.ru)

Հարգելի պարոն Միքայելյան.

Համաձայն Երևանի քաղաքապետարանի և Ձեր ընկերության միջև կնքված «Կապալային աշխատանքների կատարման գնման» 14.05.2021թ. հ.«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28-1» պայմանագրի՝ Ձեր ընկերությունը որպես «Կապալառու», 46 օրացուցային օր ժամկետում պետք է իրականացներ Երևան քաղաքում «Հետիոտնային կանչ» ռեժիմով աշխատող թվով 49 լուսացուցային համակարգերի ձեռքբերման և տեղակայման աշխատանքներ:

Ձեր ընկերության ներկայացուցչի հետ բազմաթիվ անգամ տեղի ունեցած հեռախոսազրույցների, ինչպես նաև հանդիպումների ընթացքում, վերջինս զգուշացվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ոչ բավարար ընթացքի մասին, իսկ վարչության 30.08.2021թ. հ.14/20510 գրությամբ, հիմք ընդունելով պայմանագրի դրույթները, տրվել էր լրացուցիչ 10 օր ժամանակ՝ պայմանագրով նախատեսված աշխատանքներն ավարտելու համար: Միաժամանակ նույն գրությամբ նախազգուշացվել էր, որ նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելու կամ թերի կատարելու պարագայում, պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման, ինչն ամրագրված է նաև պայմանագրում:

Հարկ եմ համարում նաև տեղեկացնել,, որ համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/26-2 կնքված պայմանագրի՝ նախատեսված աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն իրականացնող «ԷՅ ԶԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն նույնպես գրավոր տեղեկացրել է, որ Ձեր կողմից նախատեսված շինարարական աշխատանքները չեն իրականացվում:

Հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետի պահանջը՝ տեղեկացնում եմ, որ պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել է հ.«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28-1» 14.05.2021թ. պայմանագիրը:

Աշխատակազմի տրանսպորտի
վարչության պետ Է.Գալստյան

✆ 011514198